

Հավելված

Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի նոյեմբերի 8-ի
N 168-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՀՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են "Էներգետիկայի մասին" Հայաստանի
Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված` Հայաստանի Հանրապետության
Էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման
(վերականգնման) Լիցենզիա ստանալու համար ֆինանսական երաշխիքների
(այսուհետեւ` երաշխիք) հաշվարկման սկզբունքներն ու Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետեւ`
հանձնաժողով) դրանց ներկայացման կարգը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երաշխիք է համարվում սույն կարգին համապատասխան հաշվարկված եւ
ձեւակերպված որոշակի գումարը, որը ներկայացվում է էներգետիկայի բնագավառում
արտադրական հզորությունների կառուցման (վերականգնման) Լիցենզիա ստանալու
վերաբերյալ հայտով հանձնաժողով դիմած անձի կողմից` ի վկայություն Լիցենզիայի
պայմանների պահպանման եւ կատարման պատրաստակամության:

1.2 Լիցենզավորված անձի կողմից Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ
ոչ պատշաճ կատարելու դեպքում երաշխիքը մասնակիորեն կամ ամբողջությամբ`
հանձնաժողովի որոշման հիման վրա, երաշխավորողը փոխանցում է Հայաստանի
Հանրապետության պետական բյուջե:

1.3 Երաշխավորող կարող է հանդիսանալ`

ա) Հայաստանի Հանրապետությունում գործող որեւէ բանկ, վարկային
հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն,

բ) Լիցենզիայի հայտով դիմած իրավաբանական անձը, եթե նա ունի
հանձնաժողովի կողմից իրեն տրված գործունեության Լիցենզիա, բացառությամբ նոր
արտադրական հզորությունների կառուցման (վերականգնման) Լիցենզիայի:

(1.3-րդ կետը փոփ. 28.02.06 թիվ 24-ն որոշում)

1.4 Երաշխավորողը տալիս է երաշխավորագիր, որում պարտադիր նշվում են`

ա) երաշխավորագրի գործողության ժամկետը, որը պետք է համապատասխանի
Լիցենզիայի գործողության ժամկետին,

բ) երաշխավորողի պարտավորությունը Լիցենզավորված անձի կողմից
Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում`
հանձնաժողովի որոշման հիման վրա, երաշխիքն ամբողջությամբ կամ մասնակիորեն
Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին:

1.5 Երաշխավորագիրը Լիցենզիա ստանալու հայտի հետ միասին ներկայացվում է
հանձնաժողով:

1.6 Սույն կարգով սահմանված երաշխիքը չի պահանջվում, եթե
գործունեության Լիցենզիա ստանալու համար անձը հանձնաժողով է ներկայացրել
Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրված բյուջետային երաշխիք:

1.7 Լիցենզիայի պայմանները սահմանված ժամկետում կամ վաղաժամկետ
կատարելու դեպքում հանձնաժողովը, Լիցենզավորված անձի դիմումի համաձայն,
կայացնում է որոշում կամ տալիս է գրավոր թույլտվություն` երաշխիքը
Լիցենզավորված անձին վերադարձնելու մասին:

2. ԵՐԱՇԽԻՔԻ ՉԱՓԸ

2.1 Երաշխիքի հաշվարկման բազա է սահմանվում "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի չափը:

2.2 Երաշխիքի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող (վերականգնվող) արտադրական հզորության տեղակայվելիք հզորության (արտահայտված կիլովատներով) եւ "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500000 դրամը:

3. ԵՐԱՇԽԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈՆԱՆՑԵԼՈՒ ԴԵՊԵՐԸ

3.1 Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

ա) հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու կամ լիցենզիայից զրկելու մասին,

բ) լիցենզիայի գործողության ժամկետում լիցենզավորված անձը չի ավարտել արտադրական հզորության կառուցման (վերականգնման) աշխատանքների իրականացումը եւ չի դիմել լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտով, կամ հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը:

3.2 Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

ա) հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին,

բ) հանձնաժողովը որոշում է ընդունել բնապահպանական եւ տեխնիկական փորձաքննություն անցած մախագծի հանձնաժողով ներկայացման ժամկետը երկրորդ անգամ երկարաձգելու մասին:

3.3 Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել երաշխիքի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե լիցենզավորված անձը պարբերաբար խախտում է հանձնաժողովի կողմից սահմանված ձեւերին եւ կարգին համապատասխան տեղեկատվությունների եւ հաշվետվությունների հանձնաժողով ներկայացման ժամկետը:

3.4 Լիցենզավորված անձը, սույն կարգի 3.1, 3.2 եւ 3.3 կետերի համաձայն սահմանված գույմարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը հավաստող փաստաթղթի պատճենը հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում, ներկայացնում է հանձնաժողով:

3.5 Սույն կարգի 3.2 եւ 3.3 կետերում սահմանված դեպքերում՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը հանձնաժողով է ներկայացնում սույն կարգի 2.2 կետին համապատասխան հաշվարկված նոր երաշխիք:

4. ՖՈՐՍ ՄՍԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

4.1 Լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքը սույն կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետեւանք է արտակարգ եւ անկանխելի դեպքերի ու հանգամանքների, որոնք ստեղծվել են նրա կամօրից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսեւորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաեւ սաքոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են նրա գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

4.2 Լիցենզավորված անձը պարտավոր է սույն կարգի 4.1 կետում սահմանված դեպքերում անհապաղ տեղեկացնել հանձնաժողովին՝ մշտնջերմ դրանց հետեւանքների վերացման հնարավոր ժամկետները: